ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԳՈԱՐՄԵՆԻԱ » ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

«ԻՆԳՈԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ՖՀՄՍ 17-ի անցման և 2023թ. ֆինանսական հաշվետվությունները նշված ստանդարտին համապատասխան ներկայացնելու նպատակով ֆինանսական խորհրդատվություն մատուցող կազմակերպության ընտրության համար հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

Մրցույթին կարող են մասնակցել այն խորհրդատվական կազմակերպությունները որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ չափանիշներին՝

- Խորհրդատվություն իրականացնող խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա ՖՀՄՍ 17 անցման խորհրդատբության առնվազն 3 փորձ:

- Խորհրդատվության իրականացնող խորհրդատվական կազմակերպության պատասխանատու աշխատակիցը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա ֆինանսական կազմակերպության խորհրդատուի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,

- Ընկերության և խորհրդատվական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 1 տարի ժամկետով:

Մրցույթի պայմաններն են՝

1) Խորհրդատվության իրականացման ժամկետն է՝ համապատասխան պայմանագրի կնքումից մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը ներառյալ,

2) Խորհրդատվությունը պետք իրականցվի մեկ փուլով, որի ավարտից հետո պետք է տրամադրվեն.
1. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունը,
3. Ապահովագրության պայմանագրերի տրոհման մեթոդաբանությունը
4. Կիրառվող զեղչման դրույքի մեթոդաբանությունը և մեծությունը, ինչպես նաև այն ցուցանիշների նկարագրությունը, որոնց վրա կիրառցել է զեղչման դրույքը,
5. Ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչելու մեթոդաբանությունը
6. Անցումային ամսաթվի դրությամբ արդեն իսկ գործող պայմանագրերի չափման մոտեցումները
7. Անբարենպաստ պայմանագրերի սկզբնական ճանաչման ժամանակ որպես անբարենպաստ դասակարգելու հիմքերը:

Վերը նշված տեղեկատվությունը Ընկերությունը օգտագործելու է 2023թ.ի ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար:

3) Փաստաթղթերը պետք է կազմվեն հայերենով և ռուսերենով:

Վերջնական փաստաթղթերը և մատուցված ծառայությունների արդյունքները պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 2024 թվականի ապրիլի 15-ը ներառյալ,

4) Մրցույթի կազմակերպման վայրն՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 51,53

5. Մրցութային առաջարկները՝ Տեխնիկական և Ֆինանսական հայտերը, առանձին, սոսնձված և ստորագրված փակ ծրարներով, մեկ կնքված փաթեթով, հայերենով պետք է Ընկերություն

ներկայացվեն մինչև 2023 թվականի դեկտեմբերի 5-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 17:30 ներառյալ,

Մրցույթի մասնակիցները Տեխնիկական հայտում պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը՝
ա) ծառայությունների մատուցման բնութագիրը,
բ) խորհրդատվական ծառայությունների իրականացման և եզրակացության ներկայացման ժամկետները,
գ) այն Ընկերությունների ցանկը, որոնց մատուցվել են նմանատիպ ծառայություններ,
դ) խորհրդատվական ծառայություններին մասնակցող՝ միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորում ունեցող աշխատակիցների անունները, նրանց աշխատանքային փորձը և քանակը,
ե) մրցույթի մասնակցի հայեցողությամբ՝ իր կողմից մատուցվող ծառայությունների որակը հաստատող այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Մրցույթի մասնակիցները Ֆինանսական հայտում պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը՝
ա) խորհրդատվական ծառայությունների իրականացման ընդհանուր գինը (ներառյալ բոլոր տեսակի հարկերն ու ծախսերը),
բ) ծառայությունների իրականացման ընդհանուր գնի վճարման եղանակն ու պայմանները,
գ) մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրությունը և ռիսկերի բավարար փոխհատուցման չափը
դ) մրցույթի մասնակցի հայեցողությամբ՝ ծառայությունների մատուցման ֆինանսական կողմին վերաբերող, ինչպես նաև լրացուցիչ այլ տեղեկություններ:
Մրցութային առաջարկները կբացվեն և կամփոփվեն մրցութային հանձնաժողովի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 11-ին:
Մրցույթում հաղթող ճանաչված խորհրդատվական կազմակերպությունը «ԻնգոԱրմենիա» Ապահովագրական ՓԲԸ մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաղթող ճանաչված անձ հաստատվելուց հետո վերջինիս հետ համապատասխան պայմանագիրը կկնքվի ոչ ուշ քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը: Լրացուցիչ տեղեկությունների, համար կարող եք դիմել՝ «ԻնգոԱրմենիա» Ապահովագրական ՓԲԸ՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 51,53, կամ զանգահարել +374 10 59 21 21 հեռախոսահամարով (էլ. հասցե՝ lusine.avagyan@ingoarmenia.am)